EBT առանց լրավճարի – Ուղղակի ավանդի մասին թռուցիկ

Դուք կարող եք Ձեր կանխիկ դրամական օգնությունը ստանալ նպաստների էլեկտրոնային փոխանցման (EBT) քարտի կամ ուղղակի ավանդի միջոցով. դա Ձեր որոշումն է: Ձեր վարչաշրջանի աշխատողին ասեք, թե որ տարբերակով եք ցանկանում ստանալ Ձեր կանխիկ դրամական օգնությունը:

Ցանկացած պահի Դուք կարող եք անցում կատարել EBT-ից ուղղակի ավանդի, և ուղղակի ավանդից EBT-ի: Ասեք դրա մասին Ձեր վարչաշրջանի աշխատողին, և նրանք ձեզ ցուցումներ կտան: Եթե Դուք չեք կարող օգտագործել EBT Ձեր քարտը կամ EBT համակարգի որևէ մաս՝ հաշմանդամության, լեզվի իմացության սահմանափակության, հասանելիության պակասի կամ որևէ այլ խոչընդոտի պատճառով, ասեք դրա մասին Ձեր վարչաշրջանի աշխատողին, և նրանք կպարզեն՝ արդյոք Դուք որակավորվում եք Ձեր կանխիկ դրամական օգնությունն (cash aid) այլ ճանապարհներով ստանալու համար:

Եթե Դուք Ձեր կանխիկ դրամական օգնությունը ստանում եք ամսվա երկրորդ կամ երրորդ օրը, Դուք հնարավորություն կունենաք Ձեր կանխիկ դրամական օգնությունը ստանալ ամսվա առաջին օրը, եթե դժվարություններ ունենաք: Ասեք Ձեր վարչաշրջանի աշխատողին, թե ինչու կարիք ունեք Ձեր կանխիկ դրամական օգնությունն (cash aid) ամսվա առաջին օրը ստանալ: Եթե Դուք Ձեր կանխիկ դրամական օգնությունը ստանում եք ուղղակի ավանդի միջոցով, Դուք Ձեր կանխիկ դրամական նպաստները միշտ կստանաք ամսվա առաջին օրը:

Եթե Ձեր EBT քարտի հաշվից դրամ է հանվել էլեկտրոնային գողության արդյունքում, և այդ պահին Ձեր EBT քարտը եղել է ձեզ մոտ, զանգահարեք (877) 328-9677 և անմիջապես արգելափակեք Ձեր EBT քարտը և կապ հաստատեք Ձեր վարչաշրջանի աշխատողի հետ: Որոշակի պահանջների համապատասխանության դեպքում նպաստները կարող են վերականգնվել:

Հիշեք՝ CalFresh նպաստները միշտ փոխանցվում են Ձեր EBT քարտի վրա, և ձեզանից երբևէ չպետք է գումար գանձեն CalFresh գնում կատարելիս:

Ստորև ներկայացված են տեղեկություններ EBT-ի և ուղղակի ավանդի մասին, որոնք ձեզ կօգնեն կողմնորոշվել, թե որ ճանապարհով եք ցանկանում ստանալ Ձեր կանխիկ դրամական օգնությունը:

ԵԹԵ ԸՆՏՐԵՔ EBT

Դուք կարող եք կանխիկ դրամ ստանալ բանկոմատներից կամ կատարած գնումների համար վճարելիս խնդրել, որ այդ պահին գումար հանվի Ձեր քարտից:

Դուք կարող եք ամսվա ընթացքում չորս անգամ **ԱՆՎՃԱՐ** դրամ հանել MoneyPass նշան ունեցող բանկոմատներից: Ամսվա ընթացքում չորս անգամ քարտից գումար հանելուց հետո բանկոմատից գումարի յուրաքանչյուր ստացում կարժենա 80 ցենտ: Գտեք առանց լրավճարի MoneyPass բանկոմատներ՝ այցելելով www.moneypass.com կայքը: Կատարած գնումների համար վճարելիս գումար հետ ստանալը կարող է **ԱՆՎՃԱՐ** լինել, հարցրեք խանութներում:

MoneyPass նշանը չունեցող բանկոմատները կարող են ձեզանից գանձել $4 կամ ավելի յուրաքանչյուր անգամ, երբ գումար հանեք քարտից: Այս վարձերն արագ են կուտակվում:

Եթե Ձեր մոտակայքում չկա MoneyPass բանկոմատ, գտեք այլ բանկոմատներ, որոնք ձեզանից գումար չեն գանձի: Այցելեք www.ebtproject.ca.gov/Library/Cash_Access.pdf և գտեք **առանց լրավճարի բանկոմատների ցուցակ:**

Եթե կորցնեք Ձեր EBT քարտը, կամ որևէ մեկը գողանա այն, անմիջապես զանգահարեք հաճախորդների սպասարկման կենտրոն՝ (877) 328-9677 հեռախոսահամարով: Հաճախորդների սպասարկման կենտրոնի ներկայացուցիչը կարգելափակի Ձեր EBT քարտը և կօգնի ձեզ նորը ձեռք բերել: Եթե նպաստները հանվեն քարտի վրայից որևիցե մեկի կողմից, նախքան Դուք կկարողանաք զանգահարել հաճախորդների սպասարկման կենտրոն, Ձեր նպաստները չեն վերականգնվի:

EBT համակարգը գրանցում է, թե որտեղ եք օգտագործում Ձեր քարտը գումար հանելիս կամ գնումների համար վճարելիս, բայց այն չի գրանցում, թե ինչ եք գնել: Դուք կարող եք վերանայել Ձեր գործարքները՝ զանգահարելով (877) 328-9677 հեռախոսահամարով կամ ստուգելով Ձեր EBT հաշիվը՝ առցանց ստուգելով EBT հաճախորդների կայքը: Օգտատիրոջ անուն և գաղտնաբառ ստեղծեք www.ebt.ca.gov/caebtclient/clientcreate.recip կայքում:

ԵԹԵ ԸՆՏՐԵՔ ՈՒՂՂԱԿԻ ԱՎԱՆԴ

Դուք կարող եք կանխիկ դրամ ստանալ Ձեր բանկի բանկոմատներից կամ կատարած գնումների համար վճարելիս խնդրել, որ այդ պահին գումար հանվի Ձեր քարտից:

Դուք կարող եք **ԱՆՎՃԱՐ** գումար հանել քարտից Ձեր բանկի բանկոմատներից. հարցրեք Ձեր բանկում: Կատարած գնումների համար վճարելիս գումար հետ ստանալը կարող է **ԱՆՎՃԱՐ** լինել. հարցրեք խանութում:

Ձեր բանկին չպատկանող բանկոմատները կարող են ձեզանից գանձել $4 կամ ավելի յուրաքանչյուր անգամ գումար հանելիս, ինչպես նաև ցանկացած այլ վարձեր, որոնք կարող է գանձել Ձեր բանկը: Այս վարձերն արագ են կուտակվում:

Դուք կարող եք գտնել Ձեր բանկի բանկոմատները՝ զանգահարելով Ձեր բանկի հաճախորդների սպասարկման հեռախոսահամարով, այցելելով նրանց կայքը կամ ներբեռնելով նրանց ծրագիրը Ձեր սմարթֆոնի մեջ:

Եթե կորցնեք բանկոմատի Ձեր քարտը, կամ որևէ մեկը գողանա այն, անմիջապես զանգահարեք Ձեր բանկ: Ձեր բանկը կարգելափակի Ձեր քարտը և ձեզ նորը կուղարկի: Եթե որևէ մեկը գողանա և օգտագործի Ձեր քարտը, Դուք կարող եք կորցնել օգտագործված գումարի մի մասը կամ այն ամբողջությամբ: Հավելյալ տեղեկությունների համար կապ հաստատեք Ձեր բանկի հետ:

Ձեր բանկը գրանցում է, թե որտեղ եք Դուք օգտագործում բանկոմատի Ձեր քարտը գումար հանելիս և գնումների համար վճարելիս: Դուք կարող եք վերանայել Ձեր գործարքները Ձեր ամենամսյա զեկույցում՝ Ձեր բանկի կայքն այցելելով կամ Ձեր բանկի հաճախորդների սպասարկման բաժին զանգահարելով:

Խնդրում ենք հիշել՝ բանկոմատի Ձեր քարտը և Ձեր EBT քարտն ապահով պահել և երբեք ոչ ոքի չտալ Ձեր անձնական նույնականացման համարը (PIN):